ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.08.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-38/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-38/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով Գնումների աջակցման կենտրոնի կողմից 05.08.2013թ. Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-38/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. **<u>«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը աշնանացան ցորենի սերմացուի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՀՀ ԳՆ ՍԳ-ԲԸՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ, որը բաղկացած է եղել թվով 5 չափաբաժիններից:

Նշված ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակցության հայտ են ներկայացրել թվով 5 մասնակիցներ, այդ թվում՝ նաև «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» և «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությունները, որոնցից «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերությունը հայտ է ներկայացրել 1-ից 4-րդ, իսկ «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությունը

1-ից 5-րդ չափաբաժինների մասով, ընդ որում 5-րդ չափաբաժնի մասով վերջինս հանդիսացել է միակ մասնակիցը:

«ՀՀ ԳՆ ՍԳ-ԲԸՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 17.07.2013թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 1.4 կետով արձանագրվել է, որ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերության 1-ից 4-րդ չափաբաժինների մասով առաջարկված գինը կազմում է 344.260 ՀՀ դրամ, իսկ «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերության առաջարկած գինը 1-ից 4-րդ չափաբաժինների մասով 349.350 ՀՀ դրամ և 5-րդ չափաբաժնի համար 562.212 ՀՀ դրամ:

Գների նվազեցման նպատակով տեղի ունեցած բանակցությունների.

- 1-ին փուլի արդյունքում 1-4 չափաբաժինների մասով «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերության գնային առաջարկը կազմել է 342.260 ՀՀ դրամ, իսկ 5-րդ չափաբաժնի մասով «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերության գնային առաջարկը մնացել է անփոփոխ,
- 2-րդ փուլի արդյունքում 1-4 չափաբաժինների մասով «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերության գնային առաջարկը կազմել է 810 ԱՄՆ դոլար, իսկ նույն չափաբաժինների մասով «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերության գնային առաջարկը՝ 825 ԱՄՆ դոլար,
- 3-րդ փուլի արդյունքում 1-4 չափաբաժինների մասով «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերության գնային առաջարկը կազմել է 805 ԱՄՆ դոլար, ինչն ըստ ՀՀ կենտրոնական բանկի 17.07.2013թ. սահմանված փոխարժեքի՝ (1 USD - 410.30 ՀՀ դրամ) կազմել է 330.291,5 ՀՀ դրամ:

«Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերության հավաստմամբ գների նվազեցման նպատակով տեղի ունեցած բանակցությունների 3-րդ փուլում 1-ից 4-րդ չափաբաժինների մասով ընկերության ներկայացրած 795 ԱՄՆ դոլար գնային առաջարկը չի արձանագրվել և հաշվի չի առնվել:

Հայտերի բացման նիստի արձանագրությունը կազմվել է 2 տարբեր ձևով՝ մասնավորապես.

1-ին ձևում որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից է ճանաչվել «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերությունը 1-ից 4-րդ չափաբաժինների մասով, թեև արձանագրված գնային առաջարկը նվազագույնը չէ, իսկ 5-րդ չափաբաժնի մասով՝ «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությունը.

2-րդ ձևում որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից է ճանաչվել «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությունը 1-ից 5-րդ չափաբաժինների մասով, իսկ արձանագրված գնային առաջարկը նվազագույնն է:

Ընթացակարգի արդյունքում հաղթող է ճանաչվել «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությունը բոլոր չափաբաժինների մասով:

«Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերության գրությունից պարզ է դառնում, որ ընկերությունը 3-րդ փուլով ներկայացրել է գնային առաջարկ, որը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից չի արձանագրվել, մինչդեռ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը 1-ից 4-րդ չափաբաժինների մասով կազմել է 795 ԱՄՆ դոլար, ինչն ըստ ՀՀ կենտրոնական բանկի 17.07.2013թ. սահմանված փոխարժեքի՝ (1 USD - 410.30 ՀՀ դրամ) կազմել է 326.188,5 ՀՀ դրամ:

Այսինքն, «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը «Աշնանացան ցորենի սերմացուի գնման» ընթացակարգի 1-ից 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից (հաղթող) է ճանաչել «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությանը 805 ԱՄՆ դոլար գնային առաջարկով, որը նվազագույն գնային առաջարկը չէ:

«Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերություն – 326.188.5 ՀՀ դրամ:

«Սեմենա Ստավրոպոլյա» ընկերություն – 330.291.5 ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Հետևաբար Գնումների աջակցման կենտրոնը գտնում է, որ հանձնաժողովը որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից պետք է ճանաչեր «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերությանը, ինչը տվյալ դեպքում չի կատարվել:

Գնումների աջակցման կենտրոնը գտնում է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը:

Ելնելով վերոգրյալից՝ Գնումների աջակցման կենտրոնը խնդրել է դադարեցնել «ՀՀ ԳՆ ՍԳ ԲԸԱՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 17.07.2013թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 2 արձանագրությամբ «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությանը առաջին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչելու որոշումը:

2. <u>ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 08.08.2013թ. N 04/032-1083 գրությամբ դիմել է «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին և ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ խնդրելով կարծիք տալ Գնումների բողոքարկման խորհրդին 05.08.2013թ. Գնումների աջակցման կենտրոնի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը Կենտրոնի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ կարծիք չի հայտնել:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը 16.08.2013թ. N ՍԿ/4267-13 գրությամբ Գնումների աջակցման կենտրոնի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

2013թ. աշնանացան ցորենի սերմացուների գնման ընթացակարգի հրավերը միաժամանակ տրամադրվել է թվով 30 կազմակերպությունների, որում բացման օր է նշանակվել մասնակիցներին հրավերը ուղարկելուց ոչ ուշ, քան 6-րդ օրը՝ ժամը 12^{00}-ին, ինչը ֆիքսված է պատվիրատուի էլեկտրոնային փոստում, որից ուղարկվել է ընթացակարգի հրավերը:

Բացման նիստում պարզվել է, որ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» կազմակերպությունը 1-ից 4-րդ չափաբաժինների համար ներկայացրել է 344.260 դրամ, իսկ «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպությունը 1-ից 4-րդ չափաբաժինների համար առաջարկել է 349.350 դրամ, 5-րդ չափաբաժնի համար՝ 562.212:

Բացման նիստից հետո վարվել են բանակցություններ նշված երկու կազմակերպությունների հետ, որի արդյունքում «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» կազմակերպությունը 1-ից 4-րդ չափաբաժինների համար առաջարկել է նոր գին՝ 342.260 դրամ, իսկ «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպության կողմից 1-ից 4-րդ և 5-րդ չափաբաժինների համար առաջարկված գինը մնացել է անփոփոխ:

Վերոգրյալի մասին սահմանված կարգով կազմվել է արձանագրություն և ուղարկվել գնային առաջարկ ներկայացրած կազմակերպություններին:

Արձանագրությունները կազմակերպություններին ուղարկելուց հետո «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպության տնօրենը կապ է հաստատել գնահատող հանձնաժողովի նախագահի հետ և առաջարկել արձանագրված նվազագույն գներից ավելի ցածր գին, որը 1-ից 4-րդ չափաբաժինների համար կազմել է 825 ԱՄՆ դոլար, 5-րդ

չափաբաժնի համար՝ 1350 ԱՄՆ: Հանձնաժողովը որոշում է կայացրել կապ հաստատել նաև «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» կազմակերպության հետ և բանակցություններ վարել գների նվազեցման շուրջ: «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» կազմակերպությանը տեղեկացվել է «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպության կողմից ներկայացված գնային նոր առաջարկը և առաջարկվել է նվազեցնել իր կողմից ներկայացված նախորդ գնային առաջարկը, որին ի պատասխան կազմակերպության տնօրենը ներկայացրել է նոր գնային առաջարկ՝ 1-ից 4-րդ չափաբաժինների համար 810 ԱՄՆ դոլար և հայտարարել, որ դա իր կողմից ներկայացվող վերջնական գինն է:

Այնուհետև նորից կապ է հաստատվել «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպության տնօրենի հետ՝ ներկայացնելով «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» կազմակերպության ներկայացրած վերջնական գնային արժեքը, որին ի պատասխան «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպության տնօրենի կողմից առաջարկվել է նոր, ավելի ցածր գին՝ 1-ից 4-րդ չափաբաժինների համար 805 ԱՄՆ դոլար, իսկ 5-րդ չափաբաժնի համար ներկայացված գինը մնացել է անփոփոխ:

Հաշվի առնելով, որ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» կազմակերպության կողմից 810 ԱՄՆ դոլար առաջարկը հայտարարվել է վերջնական, հանձնաժողովի կողմից որոշվել է այլևս չանհանգստացնել կազմակերպությանը:

Բանակցությունների արդյունքների քննարկումից հետո հանձնաժողովի կողմից հաղթող մասնակից է ճանաչվել «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպությունը՝ իր ներկայացրած գնային առաջարկներով:

Արդյունքում վերոգրյալի մասին կազմվել է արձանագրություն և կրկին ուղարկվել մասնակիցներին:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը միաժամանակ տեղեկացրել է, որ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» կազմակերպությանը 2013 թվականի օգոստոսի 5-ին «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի տնօրենի 01-ԲՄ-119 թվակիր գրությամբ տեղեկացվել է վերոգրյալի մասին:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հայտնել է, որ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» 168-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 5-րդ ենթակետի բ) պարբերության ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Գնման գործընթաց կազմակերպելու և սերմացուների ձեռքբերումը թույլատրելու մասին» որոշման նախագիծը, որն էլ ընդունվել է 2013 թվականի օգոստոսի 1-ին:

ՀՀ գուղատնտեսության նախարարությունն ի լրումն 16.08.2013թ. N ՍԿ/4267-13 գրության, 21.08.2013թ. N ՍԿ/4331-13 գրությամբ հայտնել է հետևյալը.

2013թ. հուլիսի 19-ին ժամը 14:00-ին կայացած «ՀՀ ԳՆ ՍԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-13/01» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստի ժամանակ «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպության առաջարկած 805 ԱՄՆ դոլար գինը 1 տոննա ցորենի էլիտային սերմացուի համար ամենացածրն է եղել, ուստի հանձնաժողովի որոշմամբ վերոնշյալ կազմակերպությունը համարվել է որպես ընտրված մասնակից:

Հիմք ընդունելով հանձնաժողովի որոշումը՝ սահմանված կարգով ծանուցվել է ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» կազմակերպության առաջարկված 795 ԱՄՆ դոլար գնի վերաբերյալ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հայտնել է, որ տվյալ առաջարկը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը ստացել է 2013 թվականի հուլիսի 19-ին ժամը 16:11-ին՝ ընթացակարգի արդյունքներն ամփոփելուց և այդ մասին մասնակիցներին հայտնելուց հետո:

Հանձնաժողովը հաշվի առնելով, որ ընթացակարգի արդյունքներն ամփոփված և «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպությունը ծանուցված է եղել պայմանագիր կնքելու որոշման մասին, ստացված առաջարկը չի քննարկվել:

ՀՀ գուղատնտեսության նախարարությունը միաժամանակ հայտնել է, որ «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպությունը դիմել է «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին՝ հայտնելով, որ վերանայվել են կնքված պայմանագրով մատակարարման ենթակա սերմացուի տեղափոխման պայմանները, ինչով պայմանավորված, վերջինս պատրաստակամություն է հայտնել մատակարարումն իրականացնել 1 տոննան 795 ԱՄՆ դոլարով, ինչի կապակցությամբ կնքվել է լրացուցիչ համաձայնագիր:

<u>3. ԳԲԽ-38/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է Գնումների բողոքարկման խորհրդին 05.08.2013թ. ներկայացված բողոքը մերժել:

4. ԳԲԽ-38/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-38/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է 05.08.2013թ. Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը, «ՀՀ ԳՆ ՍԳ-ԲԸՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «ՀՀ ԳՆ ՍԳ-ԲԸՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 17.07.2013թ. ժամը 12:00-ին և 19.07.2013թ. ժամը 14:00-ին կայացած նիստերի N 2 և N 3 արձանագրությունները, ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետև՝ նաև Պատվիրատու) 16.08.2013թ. և 21.08.2013թ. Կենտրոնին ներկայացված համապատասխանաբար NN ՍԿ/4267-13 և ՍԿ/4331-13 գրությունները, «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությանն ուղարկված պայմանագիր կնքելու առաջարկը, «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերության ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը 19.07.2013թ. ժամը 16:11-ին ուղարկված էլեկտրոնային նամակը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը աշնանացան ցորենի սերմացուի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՀՀ ԳՆ ՍԳ-ԲԸՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ), որը բաղկացած է եղել թվով 5 չափաբաժիններից:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակցության հայտ են ներկայացրել թվով 5 մասնակիցներ, այդ թվում նաև «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» և «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությունները, որոնցից «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերությունը հայտ է ներկայացրել 1-ից 4-րդ, իսկ «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությունը 1-ից 5-րդ չափաբաժինների մասով, ընդ որում 5-րդ չափաբաժնի մասով վերջինս հանդիսացել է միակ մասնակիցը:

Հանձնաժողովի 17.07.2013թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության՝

- 1.4 կետով արձանագրվել է, որ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերության 1-ից 4-րդ չափաբաժինների մասով առաջարկված գինը կազմում է 344.260 ՀՀ դրամ, իսկ «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերության առաջարկած գինը 1-ից 4-րդ չափաբաժինների մասով 349.350 ՀՀ դրամ և 5-րդ չափաբաժնի համար 562.212 ՀՀ դրամ:
- 1.5 կետով արձանագրվել է հետևյալը.

Գների նվազեցման նպատակով տեղի ունեցած բանակցությունների՝

• 1-ին փուլի արդյունքում 1-ից 4-րդ չափաբաժինների մասով «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերության գնային առաջարկը կազմում է 342.260 ՀՀ դրամ, իսկ 5-րդ չափաբաժնի մասով «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերության գնային առաջարկը մնացել է անփոփոխ,

• 2-րդ փուլի արդյունքում 1-ից 4-րդ չափաբաժինների մասով «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերության գնային առաջարկը կազմել է 810 ԱՄՆ դոլար (332.343 ՀՀ դրամ), իսկ նույն չափաբաժինների մասով «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերության գնային առաջարկը՝ 825 ԱՄՆ դոլար (338.497,5 ՀՀ դրամ),

• 3-րդ փուլի արդյունքում 1-ից 4-րդ չափաբաժինների մասով «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերության գնային առաջարկը կազմել է 805 ԱՄՆ դոլար, ինչը ՀՀ կենտրոնական բանկի 17.07.2013թ. սահմանված փոխարժեքի՝ (1 USD - 410.30 ՀՀ դրամ) կազմել է 330.291,5 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 19.07.2013թ. ժամը 14:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1.2 կետով՝ հաշվի առնելով, որ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերության կողմից 810 ԱՄՆ դոլլար 1 տոննա ցորենի էլիտային սերմացուի դիմաց հայտարարվել է վերջնական գին և այն հանգամանքը, որ գների նվազեցման շուրջ անցկացված բանակցությունների շուրջ անցկացված բանակցությունների 3-րդ փուլում «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերության կողմից 1 տոննա ցորենի էլիտային սերմացուի դիմաց առաջարկված 805 ԱՄՆ դոլլար գինը նվազագույնն է, որոշում է կայացվել որպես ընտրված մասնակից ճանաչել «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությանը 1-ից 5-րդ չափաբաժիններով:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը 19.07.2013թ. N 01-ՎՄ/109 գրությամբ դիմել է «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությանը՝ ծանուցելով, որ «ՀՀ ԳՆ ՍԳ-ԲԸՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստում ընդունված որոշմամբ «ՀՀ ԳՆ ՍԳ-ԲԸՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով ընթացակարգի 1-ից 5-րդ չափաբաժիններով հաղթող է ճանաչվել «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությունը և վաստակել 381.200 ԱՄՆ դոլլարի ապրանքների մատակարարման իրավունք:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը՝ «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերության հետ կարող է կնքվել պայմանագիր օրենքով չարգելված ցանկացած ձևով պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու դեպքում: Պատվիրատուն խնդրել է համաձայնության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում (5 օրացուցային օր) ներկայացնել

պայմանագրի կատարման ապահովումը՝ պայմանագիր կնքելու համար կամ «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերության կողմից ընդունվող որոշման մասին տեղեկությունները ներկայացնել ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին gnumner-agro@mail.ru էլեկտրոնային փոստով:

Պատվիրատուի և «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերության միջև 02.08.2013թ. կնքվել է N ԲԸԱՀԱՊՁԲ-13/01 ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր, որի ընդհանուր գինը կազմել է 381.200 ԱՄՆ դոլար:

Այնուհետև, կնքվել է N ԲԸԱՀԱՊՁԲ-13/01 ծածկագրով պայմանագրի փոփոխություն, որի արդյունքում 1-4 չափաբաժինների համար 1 տոննայի արժեքը սահմանվել է 795 ԱՄՆ դոլար:

«Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերությունը 19.07.2013թ., որը Պատվիրատուի կողմից ստացվել է ժամը 16:11-ին, td_donseeds@mail.ru էլեկտրոնային փոստից հաղորդագրություն է ուղարկել gnumner-agro@mail.ru էլեկտրոնային փոստին՝ կցելով ընկերության նվազեցված գնային առաջարկը «ՀՀ ԳՆ ՍԳ-ԲԸՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով ընթացակարգի 1-ից 4-րդ չափաբաժինների համար:

Կենտրոնը Գնումների բողոքարկման խորհրդին 05.08.2013թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերության հավաստմամբ գների նվազեցման նպատակով տեղի ունեցած բանակցությունների 3-րդ փուլում 1-ից 4-րդ չափաբաժինների մասով ընկերության ներկայացրած 795 ԱՄՆ դոլար գնային առաջարկը չի արձանագրվել և հաշվի չի առնվել:

Կենտրոնը հայտնել է նաև, որ առկա են հայտերի բացման նիստի ռուսալեզու գրառմամբ թվով 2 չստորագրված արձանագրություններ, որոնք կազմվել են տարբեր ձևերով՝ մասնավորապես.

- 1-ին ձևում որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից է ճանաչվել «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերությունը 1-ից 4-րդ չափաբաժինների մասով, թեև արձանագրված գնային առաջարկը նվազագույնը չէ, իսկ 5-րդ չափաբաժնի մասով՝ «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությունը,
- 2-րդ ձևում որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից է ճանաչվել «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությունը 1-ից 5-րդ չափաբաժինների մասով, իսկ արձանագրված գնային առաջարկը նվազագույնն է:

Ընթացակարգի արդյունքում հաղթող է ճանաչվել «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությունը բոլոր չափաբաժինների մասով:

Կենտրոնը հայտնել է, որ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերության գրությունից պարզ է դառնում, որ ընկերությունը 3-րդ փուլով ներկայացրել է գնային առաջարկ, որը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից չի արձանագրվել, մինչդեռ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը 1-ից 4-րդ չափաբաժինների մասով կազմել է 795 ԱՄՆ դոլար, ինչն ըստ ՀՀ կենտրոնական բանկի 17.07.2013թ. սահմանված փոխարժեքի՝ (1 USD - 410.30 ՀՀ դրամ) կազմել է 326.188,5 ՀՀ դրամ:

Ըստ Կենտրոնի, «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը «Աշնանացան ցորենի սերմացուի գնման» ընթացակարգի 1-ից 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից (հաղթող) է ճանաչել «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությանը 805 ԱՄՆ դոլար գնային առաջարկով, որը նվազագույն գնային առաջարկը չէ:

«Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերություն – 326.188.5 ՀՀ դրամ:

«Սեմենա Ստավրոպոլյա» ընկերություն – 330.291.5 ՀՀ դրամ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը 16.08.2013թ. N ՍԿ/4267-13 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ԳՆ ՍԳ-ԲԸՀԱՊՁԲ-13/1» ծածկագրով բանակցային ընթացակարգի հայտերի բացման նիստում պարզվել է, որ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» կազմակերպությունը 1-ից 4-րդ չափաբաժինների համար ներկայացրել է 344.260 ՀՀ դրամ, իսկ «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպությունը 1-ից 4-րդ չափաբաժինների համար առաջարկել է 349.350 ՀՀ դրամ, 5-րդ չափաբաժնի համար՝ 562.212 ՀՀ դրամ:

Հայտերի բացման նիստից հետո վարվել են բանակցություններ նշված երկու կազմակերպությունների հետ, որի արդյունքում «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» կազմակերպությունը 1-ից 4-րդ չափաբաժինների համար առաջարկել է նոր գին՝ 342.260 ՀՀ դրամ, իսկ «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպության կողմից 1-ից 4-րդ և 5-րդ չափաբաժինների համար առաջարկված գինը մնացել է անփոփոխ:

Վերոգրյալի մասին սահմանված կարգով կազմվել է արձանագրություն և ուղարկվել գնային առաջարկ ներկայացրած կազմակերպություններին:

Արձանագրությունները կազմակերպություններին ուղարկելուց հետո «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպության տնօրենը կապ է հաստատել գնահատող հանձնաժողովի նախագահի հետ և առաջարկել արձանագրված նվազագույն գներից ավելի ցածր գին, որը 1-ից 4-րդ չափաբաժինների համար կազմել է 825 ԱՄՆ դոլար, 5-րդ չափաբաժնի համար՝ 1350 ԱՄՆ: Հանձնաժողովը որոշում է կայացրել կապ հաստատել նաև «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» կազմակերպության հետ և բանակցություններ վարել գների նվազեցման շուրջ: «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» կազմակերպությանը տեղեկացվել է

«Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպության կողմից ներկայացված գնային նոր առաջարկը և առաջարկվել է նվազեցնել իր կողմից ներկայացված նախորդ գնային առաջարկը, որին ի պատասխան կազմակերպության տնօրենը ներկայացրել է նոր գնային առաջարկ՝ 1-ից 4-րդ չափաբաժինների համար 810 ԱՄՆ դոլար և հայտարարել, որ դա իր կողմից ներկայացվող վերջնական գինն է:

Այնուհետև նորից կապ է հաստատվել «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպության տնօրենի հետ՝ ներկայացնելով «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» կազմակերպության ներկայացրած վերջնական գնային արժեքը, որին ի պատասխան «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպության տնօրենի կողմից առաջարկվել է նոր, ավելի ցածր գին՝ 1-ից 4-րդ չափաբաժինների համար 805 ԱՄՆ դոլար, իսկ 5-րդ չափաբաժնի համար ներկայացված գինը մնացել է անփոփոխ:

Հաշվի առնելով, որ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» կազմակերպության կողմից 810 ԱՄՆ դոլար առաջարկը հայտարարվել է վերջնական, հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել այլևս չդիմել կազմակերպությանը:

Բանակցությունների արդյունքների քննարկումից հետո հանձնաժողովի կողմից հաղթող մասնակից է ճանաչվել «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպությունը՝ իր ներկայացրած գնային առաջարկներով:

Արդյունքում վերոգրյալի մասին կազմվել է արձանագրություն և կրկին ուղարկվել մասնակիցներին:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հայտնել է, որ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 5-րդ ենթակետի բ. պարբերության՝ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Գնման գործընթաց կազմակերպելու և սերմացուների ձեռքբերումը թույլատրելու մասին» որոշման նախագիծը, որն էլ ընդունվել է 2013 թվականի օգոստոսի 1-ին:

ՀՀ գուղատնտեսության նախարարությունը 21.08.2013թ. N ՍԿ/4331-13 գրությամբ հայտնել է, որ 2013թ. հուլիսի 19-ին ժամը 14:00-ին կայացած «ՀՀ ԳՆ ՍԳ-ԲԸԱՀԱՊՁԲ-13/01» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստի ժամանակ «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպության առաջարկած 805 ԱՄՆ դոլար գինը 1 տոննա ցորենի էլիտային սերմացուի համար ամենացածրն է եղել, ուստի հանձնաժողովի որոշմամբ վերոնշյալ կազմակերպությունը համարվել է որպես ընտրված մասնակից:

Հիմք ընդունելով հանձնաժողովի որոշումը՝ սահմանված կարգով ծանուցվել է ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» կազմակերպության առաջարկված 795 ԱՄՆ դոլար գնի վերաբերյալ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հայտնել է, որ տվյալ առաջարկը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը ստացել է 2013 թվականի հուլիսի 19-ին ժամը 16:11-ին՝ ընթացակարգի արդյունքներն ամփոփելուց և այդ մասին մասնակիցներին հայտնելուց հետո:

Հանձնաժողովը հաշվի առնելով, որ ընթացակարգի արդյունքներն ամփոփված և «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպությունը ծանուցված է եղել պայմանագիր կնքելու որոշման մասին, ստացված առաջարկը չի քննարկվել:

ՀՀ գուղատնտեսության նախարարությունը միաժամանակ հայտնել է, որ «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպությունը դիմել է «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին՝ հայտնելով, որ վերանայվել են կնքված պայմանագրով մատակարարման ենթակա սերմացուի տեղափոխման պայմանները, ինչով պայմանավորված, վերջինս պատրաստակամություն է հայտնել մատակարարումն իրականացնել 1 տոննան 795 ԱՄՆ դոլարով, ինչի կապակցությամբ կնքվել է լրացուցիչ համաձայնագիր:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը 13.08.2013թ. ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացված N 25812-13 գրությամբ հայտնել է, որ 2013թ. օգոստոսի 1-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Գնման գործընթացը կազմակերպելու և սերմացուների ձեռքբերումը թույլատրելու մասին» N 842-Ն որոշումը, որից հետո ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի և մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության միջև կնքվել է համապատասխան պայմանագիր, իսկ սերմացուների ներկրման աշխատանքները ընթացքի մեջ են և կավարտվեն մինչև 2013թ. սեպտեմբերի 1-ը:

Միաժամանակ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը նշել է, որ ի սկզբանե ՀՀ կառավարության 2010թ. հուլիսի 29-ի N 971-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում 2010-2014թթ. ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրով» նախատեսվել է էլիտային վերարտադրության սերմացուները ուղղակի ձեռք բերել ՌԴ-ի «Սեմենա Ստավրոպոլյա» կազմակերպությունից, սակայն գների նվազեցման նկատառումներից ելնելով ՀՀ գյուղատնտեսության նախարարի կողմից որոշում է կայացվել 2013թ. գնումը կազմակերպելուց առաջ գների հարցում իրականացնել, որի արդյունքում ծրագրի իրականացման համար էլիտային վերարտադրության

սերմացուները 2013թ. ձեռք են բերվել 805 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամով, մինչդեռ նախորդ տարի դրանք ձեռք են բերվել 870 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամով:

ՀՀ կառավարության 01.08.2013թ. «Գնման գործընթաց կազմակերպելու և սերմացուների ձեռքբերումը թույլատրելու մասին» N 842-Ն որոշմամբ սահմանվել է հետևյալը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 5-րդ ենթակետի բ. պարբերության՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 01 դասի 12 ծրագրի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին» 4637-րդ հոդվածով նախատեսված 381.200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ նախահաշվային արժեքով ապրանքների ձեռքբերումն իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով սահմանված բանակցային ընթացակարգով:

2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը լիազորել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ձեռք բերել աշնանացան ցորենի 440 տոննա էլիտային վերարտադրության սերմացու՝ Կրասնոդարսկայա-99, Տանյա, Վասսա, Գռոմ սորտերի և 20 տոննա սուպերէլիտային վերարտադրության սերմացու՝ Կրասնոդարսկայա-99, Տանյա, Վասսա, Գռոմ, Լեբեդ, Յուկա, Գրացիա և Նոտա սորտերի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ նաև Օրենք) 20-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն բանակցային ընթացակարգի դեպքում պատվիրատուն պայմանագրի պայմանների շուրջ բանակցում է նախապես որակավորված մասնակիցների հետ և կնքում պայմանագիր,
- 2-րդ մասի համաձայն՝ բանակցային ընթացակարգը կազմակերպվում է՝
  1. գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով կամ
  2. առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:
- 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ բանակցային ընթացակարգը կարող է կազմակերպվել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու, եթե

ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ իրավիճակից ելնելով, գնման այլ ընթացակարգի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 32-րդ կետի 5-րդ ենթակետի բ. պարբերության համաձայն՝ գնումները կարող են կատարվել օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի հիման վրա պետական գնումների Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից անհետաձգելի և (կամ) հրատապ համարված այլ դեպքերում: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից գնումն անհետաձգելի համարելու վերաբերյալ որոշում կարող է ընդունվել, եթե նման որոշման նախագծի հետ մեկտեղ Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը կներկայացվեն տվյալ գնման առարկայի գծով առնվազն երեք մասնակիցների կողմից ստացված հայտերը և դրանց ուսումնասիրության արդյունքում պատվիրատուի կողմից առաջարկվող հաղթող մասնակիցը:

Օրենքի 31-րդ հոդվածի՝

- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով
- 8-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի 19.07.2013թ. ժամը 14:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1.2 կետով կայացված՝ «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությանը 1-ից 5-րդ չափաբաժիններով որպես ընտրված մասնակից ճանաչելու որոշումը կայացվել է Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջների պահպանմամբ, քանի որ տվյալ պահին «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերության առաջարկած գինը հանդիսացել է նվազագույն գնային առաջարկը:

Ինչ վերաբերում է այն պնդմանը, որ «Դոնսկոյ Ագրոխիմ Ցենտր» ընկերության 3-րդ փուլով ներկայացրած գնային առաջարկը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից չի արձանագրվել, ապա Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ այն ներկայացվել է հայտերի գնահատման արդյունքներն ամփոփելուց, Օրենքի 32-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված հայտերի գնահատման արդյունքներով հայտերի գնահատման նիստի

արձանագրություն կազմելուց և «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությանը պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելուց հետո, ուստի չէր կարող քննարկվել:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Կենտրոնի կողմից 05.08.2013թ. Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գայանե Գասպարյան

Անդամներ՝ Համլետ Գասպարյան

Էդուարդ Շախկյան